

Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի ուղերձը Սոցիալական աշխատողի օրվա կապակցությամբ

05.11.2018



Սոցիալական ոլորտի հարգելի աշխատակիցներ և գործընկերներ,

Նոյեմբերի 4-ը Հայաստանի Հանրապետությունում նշվում է որպես Սոցիալական աշխատողի օր և ես սրտանց շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական օրվա կապակցությամբ:

Երկրաշարժից հետո Դուք համարվում էիք անհատի հասարակական իրավիճակի բարելավմանը և նրա առջև ծառայած սոցիալական խնդիրների լուծմանն աջակցելու գործունեությունն իրականացնողներ, սակայն այժմ Ձեր ամենօրյա աշխատանքի նպատակը հասարակության խոցելի խմբերի խնդիրների կարգավորումն ու լուծումն է, նրանց հասարակության մեջ ինտեգրվելու հնարավորությունների զարգացումը և ընդլայնումը:

Սոցիալական ոլորտի սիրելի ներկայացուցիչներ, Ձեր միջոցով է մեր ժողովրդի հավատը ձևավորվում պետության, սոցիալական պաշտպանության և վաղվա օրվա նկատմամբ:

Եվս մեկ անգամ շնորհավորելով Ձեզ՝ մաղթում եմ հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ այդ դժվարին և պատվավոր աշխատանքն իրականացնելու համար: